Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

ԹԻՒ 68

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

## ԱԶԳԱՅԻՆ

## ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՎԱԹՍՈՒՆԸՈՒԹԵՐՈՐԴ

23 ՆՈՅԵՄԲԵՐ 1873




ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

— 1873 —

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

## ԸՆՏՐԵԱԼ 1870 ԱՄԻՆ

### ՆԻՍՏ ԿԸ.

### 23 ՆՈՅԵՄԲԵՐ 1873

**ՆԱԽԱԳԱՀ** — Տ. ԹԱԴԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ (առժամանակեայ կարգեալ)
**ԱՏԵՆԱՊԵՏ** — ԱՂԱԲԷԿԵԱՆ ՍԱՐԳԻՍ ԷՖԷՆՏԻ (Գ. Ատենապետ)

Ժամը 8 ին քառորդ մնացած մինչդեռ 46 երեսփոխան ներկայ էին եւ տակաւին մեծամասնութեան օրինաւոր թիւը լրացած չէր, Ատենապետ էֆ. ատեանը բացաւ, նախընթաց նստէն մնացեալ Քաղաքական ժողովոյ ընտրութեան համեմատական քուէարկութիւնը կատարելու համար, յայտարարելով թէ ժամը 9 ին քառորդ մնացած քուէհամարը պիտի ըսկըսուի, ուսկէ ետեւ եկած քուէներն անընդունելի են ։

Սոյն յայտարարութեան համեմատ, որոյ ժողովն իւր հաւանութիւնն ալ ընծայեց, քուէարկութիւնն սկսաւ ։

Այս միջոցին երեսփոխանաց ներկայութեան թիւն հետզհետէ բազմանալով ժողովոյն մեծամասնութիւնն ընդհուպ գոյացաւ, եւ ներկայութեան վերջին թիւն 64 ի հասաւ ։ Բացակայ երեսփոխաններէն ոմանք իրենց քուէները նամակաւ ղրկած էին, որոնց թիւը 12 ի կը հասնէր ։

Քուէարկութիւնը կատարուելէ եւ ժողովն 3 քառորդ դադար առնելէ ետեւ, քուէհամարը նախապայմանեալ ժամուն սկսաւ, ընդ հսկողութեամբ Դիւանին կողմէ կարգեալ հետեւեալ չորս քննչաց ։

Տ. Հմայեակ Վարդապետ
Տ. Ամբրոսիոս »
Սէլիմիճեան Գ. էֆէնտի
Արապեան Ս. »

Քուէհամարն հետեւեալ արդիւնքն ունեցաւ ։ 70 երեսփոխան մասնակցեցաւ սոյն քուէարկութեան, 58 ը անձամբ եւ 12 ը նամակաւ. քուէից առաւելութիւն ստացողներն եղան ըստ կարգի քուէից .

| | | | | |
|---|---|---|---|---|
| Յարութիւն | էֆ. | Գաբամաճեան | Քուէ | 64 |
| Մանուկ | » | Մանուկեան | » | 60 |
| Յակոբ | » | Խանտանեան | » | 56 |
| Սարգիս | » | Արապեան | » | 43 |
| Սիմոն | » | Նորատունկեան | » | 42 |
| Պօղոս | » | Ճամակոչեան | » | 41 |
| Սիմոն | » | Միքայէլեան | » | 40 |
| Ասապա | » | Իկիտպաշեան | » | 38 |
| Ստեփան | » | Խնդիրեան | » | 35 |
| Միքայէլ» | » | Մամիկոնեան | » | 36 |

Հետեւապէս քաղաքական ժողովոյ ընտրութիւնն օրինաւորապէս վերջացաւ եւ ամբողջ արդիւնքը վաւերացաւ ընդհանուր ժողովոյ կողմէն ։

Որոշուեցաւ որ Դիւանն 'ի պաշտօնէ Քաղաքական ժողովոյ ընտրութեան արդիւնքը հաղորդէ Կրօնական ժողովոյ Ատենապետ Տ.

Թաղէոս Սրբազանին, որպէս զի Նորին Սրբազնութիւնը հրաւէր կարդայ՝ անմիջապէս Խաան ժողովին Գաւառական Տեղապահն ընտրել եւ տեղեկագիրը մատուցանել առ Բ. Դուռն։

Ատեանը ցրուեցաւ ժամը 10 ին։

| Ատենադպիր | Գ. Ատենադպիր |
|---|---|
| ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ | ՍԱՐԳԻՍ ԱՂԱԲԵԿԵԱՆ |

ԳԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ

---

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

---

*Կը ծախուի ՚ի Դիւանատան Պատրիարքարանի, և կըգտնուի ամէն գրավաճառաց քով և Եկեղեցեաց բանկաները ․*